



**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՊԱՇՏՈՆ ԱԿԱՆՏԵՂԵԿԱԳԻՐ**

**ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՏԱՄԼՅՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ 20 (440) «07» օգոստոսի 2021թ.**

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

	<b>ՉՈՐՐՈՐԴ ԲԱԺԻՆ</b>	
	<b>ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՀՐԱՄԱՆԱԳՐԵՐԸ</b>	
468	«Արցախի Հանրապետության Նախագահի 2021 թվականի փետրվարի 17-ի ՆՀ-1151-Ն հրամանագրում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» ԱՀ Նախագահի ՆՀ-2607-Ն հրամանագիրը.....	.
469	«Արցախի Հանրապետության Նախագահի 2020 թվականի հուլիսի 4-ի ՆՀ-79-Ն հրամանագրում փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ Նախագահի ՆՀ-2667-Ն հրամանագիրը.....	.
	<b>ՅՈՒԹԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ</b>	
	<b>ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ</b>	
470	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2008 թվականի հունիսի 10-ի N 432 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ԱՀ կառավարության N 851-Ն որոշումը.....	.
471	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2009 թվականի նոյեմբերի 10-ի N 731-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ԱՀ կառավարության N 852-Ն որոշումը.....	.
472	«Արցախի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեում վերաբաշխում և Արցախի Հանրապետության կառավարության 2021 թվականի փետրվարի 26-ի N 145-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 853-Ն որոշումը.....	.
473	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 28-ի N 911-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 863-Ն որոշումը.....	.
	<b>ԻՆՆԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ</b>	
	<b>ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ</b>	
474	««Ջրմուղ-կոյուղի» փակ բաժնետիրական ընկերությանը խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման լիցենզիա տրամադրելու մասին» ԱՀ հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի N 51-Ա որոշումը.....	.
	<b>ՏԱՄՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ</b>	
	<b>ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ,</b>	

	<p align="center"><b>ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՅԼ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՀՐԱՄԱՆՆԵՐԸ</b></p>	
475	<p>«Արցախի Հանրապետության հիմնական դեղերի ցանկը հաստատելու և Արցախի Հանրապետության առողջապահության նախարարի 2018 թվականի սեպտեմբերի 27-ի N 238-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» ԱՀ առողջապահության նախարարի N 172-Ն հրամանը.....</p>	.
476	<p>«Անհատ ձեռնարկատեր Ռադիկ Հայրապետյանին տրված լիցենզիայի ուժը կորցրած ճանաչելու մասին» ԱՀ առողջապահության նախարարի N 173-Ա հրամանը.....</p>	.
477	<p>«Անհատ ձեռնարկատեր Հայկ Ավանեսյանի բժշկական օգնության և սպասարկման իրականացման վայրի փոփոխման մասին» ԱՀ առողջապահության նախարարի N 175-Ա հրամանը.....</p>	.
478	<p>«Անհատ ձեռնարկատեր Վալերիկ Պողոսյանի դեղատնային գործունեության իրականացման վայրի փոփոխման մասին» ԱՀ առողջապահության նախարարի N 176-Ա հրամանը.....</p>	.
479	<p>«Արցախի Հանրապետությունում մարդատար-տաքսի ավտոմոբիլներով միջպետական և ներհանրապետական ուղեվորափոխադրումների կազմակերպման գործունեության լիցենզիա և լիցենզիայի ներդիրներ տրամադրելու, լիցենզիայի և լիցենզիայի ներդիրների գործողությունները դադարեցնելու մասին» ԱՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի N 167 հրամանը.....</p>	.

ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ

ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ  
ՓԵՏՐՎԱՐԻ 17-Ի ՆՀ-1151-Ն ՀՐԱՄԱՆԱԳՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ  
ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ **ո ր ո շ ու մ ե մ.**

1. Արցախի Հանրապետության Նախագահի 2021 թվականի փետրվարի 17-ի «Ռեզոլյուցիայի հիման վրա» պայմանավորված՝ Արցախի Հանրապետության համայնքներում տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ չանցկացնելու մասին» ՆՀ-1151-Ն հրամանագրի՝

1) վերնագրում «ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ» բառից առաջ լրացնել «ՈՐՈՇ» բառը.

2) 1-ին կետում «համայնքներում» բառից հետո լրացնել «, բացառությամբ Արցախի Հանրապետության վերահսկողության տակ գտնվող համայնքների,» բառերը.

3) 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Սահմանել, որ 2020 թվականի սեպտեմբերի 27-ին Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված պատերազմական գործողությունների հետևանքով բռնազավթված համայնքներում՝

1) համայնքի ավագանու լիազորությունների ժամկետը երկարաձգվում է մինչև նորընտիր ավագանու առաջին նիստը, իսկ համայնքի ղեկավարի լիազորությունների ժամկետը՝ մինչև համայնքի նոր ղեկավարի լիազորությունների ստանձնման օրը.

2) համայնքի ղեկավարի կամ համայնքի ավագանու անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվելու դեպքում այդ պաշտոններում նշանակվում են պաշտոնակատարներ՝ գյուղական համայնքներում՝ համապատասխան շրջանի վարչակազմի ղեկավարի որոշմամբ, իսկ քաղաքային համայնքներում՝ համապատասխան շրջանի վարչակազմի ղեկավարի ներկայացմամբ՝ Արցախի Հանրապետության կառավարության որոշմամբ:»:

2. Մինչև սույն հրամանագրի ուժի մեջ մտնելը Արցախի Հանրապետության վերահսկողության տակ գտնվող համայնքներում համայնքի ղեկավարի և համայնքի ավագանու անդամի պաշտոնակատարները պաշտոնավարում են մինչև նորընտիր համայնքի ղեկավարի և համայնքի ավագանու կողմից լիազորությունների ստանձնման օրը:

3. Սույն հրամանագիրն ուժի մեջ է մտնում հրապարակվելուց հետո անմիջապես, իսկ սույն հրամանագրի 1-ին կետի 3-րդ ենթակետի գործողությունը տարածվում է 2020 թվականի սեպտեմբերի 27-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2021թ. հուլիսի 22  
Ստեփանակերտ  
ՆՀ-2607-Ն

## ԱՐՑԱՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ

### ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

#### ԱՐՑԱՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՄԻ 4-Ի ՆՀ-79-Ն ՀՐԱՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ **որոշում եմ.**

1. Արցախի Հանրապետության Նախագահի 2020 թվականի հուլիսի 4-ի «Արցախի Հանրապետության Անվտանգության խորհրդի գրասենյակ» պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, Արցախի Հանրապետության Անվտանգության խորհրդի գրասենյակի կանոնադրությունը և կառուցվածքը հաստատելու մասին» ՆՀ-79-Ն հրամանագրի (այսուհետ հրամանագիր) 2-րդ կետով հաստատված N 1 հավելվածում՝

1) 13-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«13. Գրասենյակը կառավարում է Անվտանգության խորհրդի քարտուղարը, որին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է Արցախի Հանրապետության Նախագահը:».

2) 15-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«15. Անվտանգության խորհրդի քարտուղարի խորհրդականին (խորհրդականներին), օգնականին, մամուլի քարտուղարին, գրասենյակի ղեկավարին և գրասենյակի վարչության պետերին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է Անվտանգության խորհրդի քարտուղարը:».

3) 16-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«16. Գրասենյակը ղեկավարում է գրասենյակի ղեկավարը, որին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է Անվտանգության խորհրդի քարտուղարը:».

4) 17-րդ, 18-րդ և 23-րդ կետերը ուժը կորցրած ճանաչել.

5) 20-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«20. Գրասենյակի ղեկավարը՝

1) ղեկավարում է գրասենյակի ընթացիկ գործունեությունը.

2) պատասխանատու է գրասենյակի առջև դրված խնդիրների ու գործառնությունների իրականացման համար.

3) վարում է Անվտանգության խորհրդի քարտուղարի և գրասենյակի պաշտոնական փոստը.

4) Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տնօրինում է գրասենյակին ամրացված պետական գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները.

5) Անվտանգության խորհրդի քարտուղարի հանձնարարությամբ ներկայացնում գրասենյակն այլ մարմինների, կազմակերպությունների և քաղաքացիների հետ փոխհարաբերություններում, իր իրավասության սահմաններում հանդես է գալիս գրասենյակի անունից, ինչպես նաև տալիս է գրասենյակի անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ նաև վերալիազորման իրավունքով լիազորագրեր.

6) պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է գրասենյակի աշխատողներին, ինչպես նաև նրանց նկատմամբ կիրառում է խրախուսանքի և կարգապահական տույժի միջոցներ.

7) իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, տալիս պարտադիր կատարման ցուցումներ.

8) կազմակերպում է գրասենյակի բյուջեի նախագծի նախապատրաստական աշխատանքները և ապահովում բյուջետային միջոցներից ծախսերի կատարումը.

9) Անվտանգության խորհրդի քարտուղարի հանձնարարությամբ մասնակցում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից անցկացվող նիստերին և խորհրդակցություններին, հրավիրում խորհրդակցություններ, կազմակերպում իրեն հանձնարարված հարցերի քննարկումներ.

10) համագործակցում է պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և այլ մարմինների հետ.

11) Անվտանգության խորհրդի քարտուղարին պարբերաբար ներկայացնում է տեղեկատվություն գրասենյակի կողմից իրականացվող աշխատանքների վերաբերյալ.

12) ապահովում է Անվտանգության խորհրդի քարտուղարի խորհրդակցությունների և հանդիպումների արձանագրությունների նախապատրաստումը.

13) ապահովում է Անվտանգության խորհրդի քարտուղարի ցուցումների և հանձնարարականների կատարումը.

14) ստորագրում և կնքում է գրասենյակի անունից պատրաստվող փաստաթղթերը.

15) իրականացնում է Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ լիազորություններ:»:

2. Հրամանագրի 3-րդ կետով հաստատված N 2 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

3. Մույն հրամանագիրն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ գործողությունը տարածվում է 2021 թվականի օգոստոսի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2021թ. հուլիսի 29  
Ստեփանակերտ  
ՆՀ-2667-Ն

Հավելված  
Արցախի Հանրապետության Նախագահի  
2021 թվականի հունիսի 29-ի  
ՆՀ-2667-Ն հրամանագրի

«Հավելված N 2  
Արցախի Հանրապետության Նախագահի  
2020 թվականի հունիսի 4-ի  
ՆՀ-79-Ն հրամանագրի

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ  
ԳՐԱՍԵՆՑԱԿԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ**

1. Անվտանգային քաղաքականության և հիմնարար փաստաթղթերի վարչություն՝
  - 1) պաշտպանական քաղաքականության և ռազմավարական առաջնորդող փաստաթղթերի բաժին.
  - 2) պետական, հասարակական անվտանգության բաժին.
  - 3) սփյուռքի բաժին:
2. Ռազմական անվտանգության վարչություն՝
  - 1) արտաքին համագործակցության բաժին.
  - 2) ներքին համագործակցության բաժին:
3. Քաղաքացիական պաշտպանության և զորահավաքային ծրագրերի վարչություն՝
  - 1) քաղաքացիական պաշտպանության բաժին.
  - 2) զորահավաքային ծրագրերի կատարման ապահովման և վերահսկողության բաժին:
4. Ֆինանսական և սոցիալ-տնտեսական անվտանգության վարչություն՝
  - 1) սոցիալ-տնտեսական բաժին .
  - 2) ֆինանսատնտեսական բաժին:
5. Իրավաբանական և իրավական փորձաքննությունների վարչություն՝
  - 1) իրավաբանական բաժին.
  - 2) մոնիթորինգի բաժին:
6. Տեղեկատվական անվտանգության և վերլուծության վարչություն՝
  - 1) տեղեկատվության բաժին.
  - 2) վերլուծության բաժին.
7. Քարտուղարություն »:

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝**

**Կ. ՇԱՀՐԱՍՄԱՆՅԱՆ**

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

2 օգոստոսի 2021թ.

N 851-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
2008 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 10-Ի N 432 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2008 թվականի հունիսի 10-ի «Տրանսպորտային միջոցների հաշվառման մեծ պահանջարկ ունեցող համարանիշերի չափորոշիչները սահմանելու մասին» N 432 որոշմամբ սահմանված N 3 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված  
Արցախի Հանրապետության կառավարության  
2021 թվականի օգոստոսի 2-ի N 851-Ն որոշման

«Հավելված N 3  
ԼՂՀ կառավարության 2008 թվականի  
հունիսի 10-ի N 432 որոշման

**ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԵԾ ՊԱՀԱՆՁԱՐԿ ՈՒՆԵՑՈՂ  
ՀԱՄԱՐԱՆԻՇԵՐԻ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ  
ՆՇԱՆՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

Պայմանական նշանները	Նշանակությունը (թվանշաններ)	Ծանոթագրություն
0	0 (զրո)	
X	(1-9)	Միննույն հաշվառման համարանիշում «X» պայմանական նշանի փոխարեն կիրառվում է նույն թվանշանը
Y	(1-9)	Միննույն հաշվառման համարանիշում «Y» պայմանական նշանի փոխարեն կիրառվում է նույն թվանշանը
Պայմանական նշանները	Նշանակությունը (տառերը)	
+	տառ՝ A կամ B կամ C կամ D կամ E կամ F կամ G կամ H կամ I կամ J կամ K կամ L կամ M կամ N կամ O կամ P կամ Q կամ R կամ S կամ T կամ U կամ V կամ W կամ X կամ Y կամ Z	Միննույն հաշվառման համարանիշում «+» պայմանական նշանը կրկնվելու դեպքում կիրառվում է նույն տառը
-	տառ՝ A կամ B կամ C կամ D կամ E կամ F կամ G կամ H կամ I կամ J կամ K կամ L կամ M կամ N կամ O կամ P կամ Q կամ R կամ S կամ T կամ U կամ V կամ W կամ X կամ Y կամ Z	

»:

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ  
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ**

**Ա. ԼԱԶԱՐՅԱՆ**



ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

2 օգոստոսի 2021թ.

N 852-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
2009 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 10-Ի N 731-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿՍՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Լեոնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2009 թվականի նոյեմբերի 10-ի «Ճանապարհային լուսացույցներին ներկայացվող պահանջները, դրանց կիրառման ու տեղակայման կանոնները և ճանապարհային նշաններին ներկայացվող պահանջները, դրանց կիրառման ու տեղակայման կանոնները հաստատելու մասին» N 731-Ն որոշմամբ հաստատված թիվ 3 հավելվածի 11-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«11. Նշանների վրա մակագրությունները կատարվում են հայերեն և ռուսերեն, անհրաժեշտության դեպքում, դրանք կարող են կրկնվել անգլերենով: Մակագրությունների համար հայերեն տառատեսակները սահմանված են ԳՕՍՏ 10807-78 «Ճանապարհային նշաններ: Ընդհանուր տեխնիկական պայմաններ» ստանդարտով, իսկ ռուսերեն և անգլերեն տառատեսակները՝ ԳՕՍՏ Ռ 52290-2004 ստանդարտով:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

2 օգոստոսի 2021թ.

N 853-Ն

ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ  
ՎԵՐԱԲԱՇՏՈՒՄ ԵՎ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
2021 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 26-Ի N 145-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Արցախի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի 9-րդ և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածները՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. «Արցախի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի N 1 հավելվածի N 1 աղյուսակում և N 3 հավելվածում կատարել վերաբաշխում և Արցախի Հանրապետության կառավարության 2021 թվականի փետրվարի 26-ի «Արցախի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 145-Ն որոշմամբ սահմանված N 2 հավելվածի N 1 աղյուսակի և N 3 հավելվածի ցուցանիշներում կատարել փոփոխություններ՝ համաձայն NN 1 և 2 հավելվածների:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ դրա գործողությունը տարածվում է 2021 թվականի հուլիսի 17-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**«ԱՐՑԱՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՑՈՒՋԵՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ N 1 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 1 ԱՐՅՈՒՄԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄԸ ԵՎ ԱՐՑԱՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 26-Ի N 145-Ն ՈՐՈՇՄԱՆ N 2 ՀԱՎԵԼՎԱԾԻ N1 ԱՐՅՈՒՄԱԿԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

(հազար դրամ)

Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ֆինանսավորվող ծրագրերի և վերջիններս իրականացնող մարմինների անվանումները	Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում)			
				Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի
			<b>ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՄԵՐ այդ թվում՝</b>	-	-	<b>2 785 697,4</b>	-
<b>03</b>			<b>ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳ, ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ</b>	-	-	<b>(10 000,0)</b>	<b>(30 000,0)</b>
	<b>3</b>		<b>Դատական գործունեություն և իրավական պաշտպանություն</b>	-	-	(10 000,0)	(30 000,0)
		2	Իրավական պաշտպանություն	-	-	(10 000,0)	(30 000,0)
		01	Քաղաքացիներին և իրավաբանական անձանց պատճառված վնասի և այլ պարտավորությունների հատուցման ենթակա ծախսեր	-	-	(10 000,0)	(30 000,0)
			ԱՀ ֆինանսների նախարարություն	-	-	(10 000,0)	(30 000,0)
<b>04</b>			<b>ՏՆՏԵՄԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>	-	-	<b>1 493 000,0</b>	<b>(10 000,0)</b>
	<b>1</b>		<b>Ընդհանուր բնույթի տնտեսական, առևտրային և աշխատանքի գծով հարաբերություններ</b>	-	-	1 000 000,0	-
		1	Ընդհանուր բնույթի տնտեսական և առևտրային հարաբերություններ	-	-	1 000 000,0	-
		05	Աջակցություն Արցախի ներդրումային հիմնադրամին	-	-	1 000 000,0	-
			ԱՀ ֆինանսների նախարարություն	-	-	1 000 000,0	-
	<b>2</b>		<b>Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն, ձկնորսություն և որսորդություն</b>	-	-	500 000,0	-
		1	Գյուղատնտեսություն	-	-	500 000,0	-

		10	Աջակցություն գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամին	-	-	500 000,0	-
			ԱՀ էկոնոմիկայի և գյուղատնտեսության նախարարություն			500 000,0	-
		11	Գյուղատնտեսական միջոցառումների իրականացման ծրագրեր	-	-	-	-
			ԱՀ էկոնոմիկայի և գյուղատնտեսության նախարարություն			(195 025,0)	(264 025,0)
			ԱՀ ջրային կոմիտե			195 025,0	264 025,0
		18	Արցախի Հանրապետությունում ոռոգման նպատակով հողօգտագործողներին աջակցման ծրագիր	-	-	-	-
			ԱՀ էկոնոմիկայի և գյուղատնտեսության նախարարություն			(237 312,3)	(282 312,3)
			ԱՀ ջրային կոմիտե			237 312,3	282 312,3
	<b>5</b>		<b>Տրանսպորտ</b>	-	-	(7 000,0)	(10 000,0)
	4		Օդային տրանսպորտ	-	-	(7 000,0)	(10 000,0)
		02	Ուղղաթիռների թռիչքների ապահովման ծախսեր	-	-	(7 000,0)	(10 000,0)
			ԱՀ կառավարություն			(7 000,0)	(10 000,0)
<b>06</b>			<b>ԲՆԱԿԱՐԱՆՁՄԻՆ ԾԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>	-	-	-	-
	<b>3</b>		<b>Ջրամատակարարում</b>	-	-	-	-
	1		Ջրամատակարարում	-	-	-	-
		01	Խմելու և ոռոգման ջրի մատակարարման ծառայությունների սուբսիդավորում	-	-	-	-
			ԱՀ էկոնոմիկայի և գյուղատնտեսության նախարարություն			(72 823,4)	(84 623,4)
			ԱՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն			(86 343,4)	(201 302,4)
			ԱՀ ջրային կոմիտե			159 166,8	285 925,8
		02	Ջրամբարների, ջրանցքների, ջրատարների վերանորոգում, վերականգնում և պահպանում	-	-	-	-
			ԱՀ էկոնոմիկայի և գյուղատնտեսության նախարարություն			(2 000 000,0)	(3 000 000,0)
			ԱՀ ջրային կոմիտե			2 000 000,0	3 000 000,0
<b>07</b>			<b>ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ</b>	-	-	-	-
	<b>1</b>		<b>Բժշկական ապրանքներ, սարքեր և սարքավորումներ</b>	-	-	(200 000,0)	(200 000,0)
	3		Բժշկական սարքեր և սարքավորումներ	-	-	(200 000,0)	(200 000,0)
		01	Կենտրոնացված կարգով բժշկական սարքավորումների և պարագաների ձեռքբերում	-	-	(200 000,0)	(200 000,0)
			ԱՀ առողջապահության նախարարություն			(200 000,0)	(200 000,0)
	<b>6</b>		<b>Առողջապահություն (այլ դասերին չպատկանող)</b>	-	-	200 000,0	200 000,0
	1		Առողջապահական հարակից ծառայություններ և ծրագրեր	-	-	200 000,0	200 000,0
		03	Հանրապետությունից դուրս բուժման ուղեգրված հիվանդների ծախսերի փոխհատուցում	-	-	200 000,0	200 000,0

			ԱՀ առողջապահության նախարարություն	-	-	200 000,0	200 000,0
<b>10</b>			<b>ՄՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ</b>	-	-	<b>(1 008 518,6)</b>	<b>(2 000 000,0)</b>
	<b>4</b>		<b>Ընտանիքի անդամներ և զավակներ</b>	-	-	(8 518,6)	-
		1	Ընտանիքի անդամներ և զավակներ	-	-	(8 518,6)	-
		09	Պետական աջակցություն «Երեխաների խնամքի և պաշտպանության N2 գիշերօթիկ հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը	-	-	(8 518,6)	-
			ԱՀ աշխատանքի, սոցիալական և միգրացիայի հարցերի նախարարություն	-	-	(8 518,6)	-
	<b>7</b>		<b>Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող)</b>	-	-	(1 000 000,0)	(2 000 000,0)
		1	Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող)	-	-	(1 000 000,0)	(2 000 000,0)
		05	2020 թվականի պատերազմական գործողությունների հետևանքով ծանր ֆինանսատնտեսական վիճակում հայտնված ֆիզիկական և իրավաբանական անձանց վարկային պարտավորությունների կատարման և կրած վնասների պետական աջակցություն	-	-	(1 000 000,0)	(2 000 000,0)
			ԱՀ ֆինանսների նախարարություն	-	-	(1 000 000,0)	(2 000 000,0)
	<b>9</b>		<b>Սոցիալական պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)</b>	-	-	-	-
		2	Սոցիալական պաշտպանությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ (այլ դասերին չպատկանող)	-	-	-	-
		10	Գյուղական կամ քաղաքային բացառությամբ Ստեփանակերտ քաղաքի, բնակավայրերում մշտապես բնակվող երիտասարդ ընտանիքներին բնակելի տներ կառուցելու նպատակով անհատույց պետական ֆինանսական աջակցություն	-	-	-	-
			ԱՀ աշխատանքի, սոցիալական և միգրացիայի հարցերի նախարարություն	-	-	(185 000,0)	(285 000,0)
			ԱՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	-	-	185 000,0	285 000,0
<b>11</b>			<b>ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ԶԻԱՍՎՈՂ ԾԱԽՄԵՐ</b>	-	-	<b>2 311 216,0</b>	<b>2 040 000,0</b>
	<b>1</b>		<b>Պետական բյուջեի և համայնքների պահուստային ֆոնդեր</b>	-	-	2 174 616,0	2 000 000,0
		1	Պետական բյուջեի պահուստային ֆոնդ	-	-	2 174 616,0	2 000 000,0
		01	Պետական բյուջեի պահուստային ֆոնդ	-	-	2 174 616,0	2 000 000,0
			ԱՀ կառավարություն	-	-	2 174 616,0	2 000 000,0
	<b>2</b>		<b>Այլ ծախսեր</b>	-	-	136 600,0	40 000,0
		1	Այլ ծրագրեր	-	-	136 600,0	40 000,0
		03	Հանրապետական միջոցառումների իրականացման ծրագրեր	-	-	(13 400,0)	(20 000,0)
			ԱՀ կառավարություն	-	-	(13 400,0)	(20 000,0)
		04	Հատուկ նպատակների ծախսեր	-	-	100 000,0	100 000,0
			ԱՀ կառավարություն	-	-	100 000,0	100 000,0

		05	Գույքի գնման ծախսեր	-	-	60 000,0	-
			ԱՀ կառավարություն	-	-	60 000,0	-
		06	Նախորդ տարիներից առաջացած պարտքերի մարում	-	-	(10 000,0)	(40 000,0)
			ԱՀ կառավարություն	-	-	(10 000,0)	(40 000,0)

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ  
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

Հավելված N 2  
Արցախի Հանրապետության կառավարության  
2021 թվականի օգոստոսի 2-ի N 853-Ն որոշման

**«ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ»  
ՕՐԵՆՔԻ N 3 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄԸ ԵՎ ԱՐՑԱԽԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 26-Ի N 145-Ն  
ՈՐՈՇՄԱՆ N 3 ՀԱՎԵԼՎԱԾԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

(հազար դրամ)

ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԴԵՖԻՑԻՏԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ	Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	-	-	<b>2 785 697,4</b>	-
այդ թվում՝				
<b>Փոխառու զուտ միջոցներ</b>	-	-	<b>2 785 697,4</b>	-
<b>1. Վարկերի և փոխառվածությունների ստացում</b>			<b>2 785 697,4</b>	
<b>2. Մտացված վարկերի և փոխառվածությունների մարում</b>				

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ  
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

4 օգոստոսի 2021թ.

N 863-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 911-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 28-ի «Շուշիի տեխնոլոգիական համալսարան» հիմնադրամ հիմնադրելու մասին» N 911-Ն որոշման մեջ (այսուհետ՝ որոշում) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) որոշման նախաբանից և որոշմամբ հաստատված հավելվածի 143-րդ կետից «օրենքի» բառից առաջ հանել «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության» բառերը.

2) որոշման 3-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«3. Արցախի Հանրապետության անունից հանդես եկող պետական կառավարման մարմին սահմանել Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը:».

3) որոշմամբ հաստատված հավելվածում՝

ա. 2-րդ և 3-րդ կետերը շարադրել նոր խմբագրությամբ.

«2. Համալսարանի հիմնադիրը Արցախի Հանրապետությունն է՝ ի դեմս Արցախի Հանրապետության կառավարության: Արցախի Հանրապետության անունից հանդես եկող պետական կառավարման լիազոր մարմինը Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունն է:

3. Համալսարանը իր գործունեությունն իրականացնում է Սահմանադրությանը, Քաղաքացիական օրենսգրքին, «Հիմնադրամների մասին», «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին», «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին», «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» օրենքներին, իրավական այլ ակտերին և սույն կանոնադրությանը համապատասխան:».

բ. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն» բառերի համապատասխան հոլովաձևերը փոխարինել «Արցախի Հանրապետություն» բառերի համապատասխան հոլովաձևերով,

գ. ուժը կորցրած ճանաչել 7.1-ին կետը,

դ. 15-րդ և 17-րդ կետերում «ղիզայնի» բառից հետո լրացնել «կերպարվեստի, բժշկագիտական, այդ թվում՝ դեղագործական» բառերը,

ե. 23-րդ կետի «25» թիվը փոխարինել «20» թվով,

զ. 24-րդ, 25-րդ և 26-րդ կետերի «20» թիվը փոխարինել «25» թվով,

է. 27-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«27. Պետական կառավարման լիազոր մարմնի կողմից հոգաբարձուների խորհրդի անդամներ են առաջադրվում կրթության, գիտության, մշակույթի և տնտեսության տարբեր ոլորտների ճանաչված ներկայացուցիչներ, ինչպես նաև ճանաչված գործատուներ (հոգաբարձուների խորհրդի կազմի 25 տոկոսը):».

ը. 49-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝



«49. Գիտական խորհրդի կազմում ընդգրկվում են ռեկտորը (նախագահ), պրոռեկտորները, գիտական քարտուղարը, ուսանողական խորհրդի նախագահը, ինչպես նաև ռեկտորի նշանակմամբ՝ կառուցվածքային այլ ստորաբաժանումների ղեկավարներ և համալսարանի առանձին դասախոսներ ու գիտաշխատողներ, գիտության առաջատար մասնագետներ, համալսարանի ուսանողության ներկայացուցիչներ: Ռեկտորի կողմից նշանակվող անդամների թիվը չի կարող գերազանցել գիտական խորհրդի անդամների թվի 50 տոկոսը: Համալսարանի ուսանողության ներկայացուցիչների թիվը չի կարող պակաս լինել գիտական խորհրդի անդամների թվի 25 տոկոսից:»,

թ. 140-րդ և 141-րդ կետերում «համալսարանի գիտական խորհուրդը» բառերը փոխարինել «պետական կառավարման լիազոր մարմինը» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**«Հաստատում եմ»**

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ**

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ  
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

2021 թվականի հուլիսի 28-ի

«ՋՐՄՈՒՂ-ԿՈՑՈՒՂԻ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ  
ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՄՍՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ (ԿԵՂՏԱՋՐԵՐԻ  
ՄԱՔՐՄԱՆ) ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՍՏՈՒՑՄԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ՏՐԱՄԱՂԻԵԼՈՒ  
ՄԱՍԻՆ

N 51-Ա

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Հիմք ընդունելով Ջրային օրենսգրքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, 38-րդ, 39-րդ և 40-րդ հոդվածները, Արցախի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2020 թվականի հուլիսի 31-ի «Ջրային ոլորտում գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2008 թվականի ապրիլի 10-ի թիվ 20Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 39-Ն որոշումը և հաշվի առնելով «Ջրմուղ-կոյուղի» փակ բաժնետիրական ընկերության 2021 թվականի հունիսի 7-ի և հունիսի 24-ի գրություններով ներկայացված հայտը՝ Արցախի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը **ո ր ո շ ու մ է.**

1. Բավարարել «Ջրմուղ-կոյուղի» փակ բաժնետիրական ընկերության ներկայացրած հայտը և տրամադրել խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման լիցենզիա՝ մինչև 2036 թվականի օգոստոսի 17-ը գործողության ժամկետով:

2. Սահմանել «Ջրմուղ-կոյուղի» փակ բաժնետիրական ընկերության խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման լիցենզիայի պայմանները՝ համաձայն հավելվածի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021 թվականի օգոստոսի 17-ից:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ  
ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ  
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Գ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2021 թվականի հուլիսի 28.

ք. Ստեփանակերտ

Հավելված  
Արցախի Հանրապետության հանրային  
ծառայությունները և տնտեսական մրցակցությունը  
կարգավորող պետական հանձնաժողովի  
2021 թվականի հուլիսի 28-ի N 51-Ս որոշման

**«Ջրմուղ-կոյուղի» փակ բաժնետիրական ընկերության  
խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման)  
ծառայությունների մատուցման ԼՁ N 0001 լիցենզիայի պայմաններ**

**1. Լիցենզիայում օգտագործվող հիմնական հասկացությունները**

1. Սույն լիցենզիայում օգտագործվող հասկացությունները սահմանվում են հետևյալ կերպ.

1) **Հանձնաժողով**՝ Արցախի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողով.

2) **Լիցենզավորված անձ**՝ «Ջրմուղ-կոյուղի» փակ բաժնետիրական ընկերություն.

3) **Լիցենզիա**՝ Հանձնաժողովի կողմից Լիցենզավորված անձին տրամադրված սույն պաշտոնական փաստաթուղթը, որը հաստատում է Սպասարկման տարածքում Բաժանորդներին Շառայություններ մատուցելու Լիցենզավորված անձի իրավունքը և պարտականությունը.

4) **Շառայություններ**՝ խմելու ջրի մատակարարման (այսուհետ՝ ջրամատակարարում) և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայություններ: Այն դեպքում, երբ Բաժանորդի հետ կնքված Շառայությունների մատուցման պայմանագրով նախատեսված է միայն ջրամատակարարման կամ միայն ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայության մատուցում կամ ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցում, ապա Լիցենզավորված անձի կողմից Շառայությունների մատուցումը վերաբերում է միայն տվյալ ծառայությանը (ծառայություններին).

5) **Ջրային համակարգ**՝ Սպասարկման տարածքում Լիցենզիայի պայմանների կատարման համար անհրաժեշտ հիդրոտեխնիկական կառուցվածքներ և այլ ինժեներական կառույցներ, որոնք գտնվում են Լիցենզավորված անձի տնօրինման կամ տիրապետման տակ.

6) **Բաժանորդ**՝ իրավաբանական կամ ֆիզիկական անձ կամ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող կազմակերպություն, կամ անհատ ձեռնարկատեր, որը Լիցենզավորված անձի հետ կնքել է Շառայությունների մատուցման պայմանագիր կամ դիմել է Շառայությունների մատուցման պայմանագրի կնքման համար.

7) **Կանոններ**՝ խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման կանոններ.

8) **Սպասարկման տարածք**՝ Լիցենզիայի 4-րդ կետով ամրագրված Շառայությունների մատուցման տարածք.

9) **Ֆորս մաժոր**՝ արտակարգ և անկանխելի այն դեպքերն ու հանգամանքները, որոնք առաջացել են Լիցենզավորված անձի կամքից անկախ և միևնույն ժամանակ, անկախ վերջինիս գործադրած ջանքերից, խոչընդոտել են պարտավորությունների կատարմանն ուղղված նրա գործողություններին: Սույն Լիցենզիայի իմաստով արտակարգ և անկանխելի դեպքերն ու հանգամանքներն են բնական և տեխնածին աղետները, բնության ուժերի արտասովոր դրսևորումները (այդ թվում՝ ջրհեղեղներ, երկրաշարժեր, փոթորիկներ, պտտահողմեր, կայծակով և ամպրոպով ուղղորդվող հորդառատ անձրևներ, ձնաբքեր, սողանքներ), գործադուլները, հասարակական անկարգությունները, ահաբեկչությունները, պատերազմները և ապստամբությունները: Սույն ենթակետը չի սահմանափակում Լիցենզավորված անձի իրավունքը սույն կետում նշվածից բացի այլ արտակարգ և անկանխելի դեպքեր ու հանգամանքներ ի հայտ գալու պարագայում դիմելու Հանձնաժողով՝ դրանք Ֆորս մաժոր ճանաչելու համար:

## **2. Լիցենզիայի գործողության ժամկետը**

2. Լիցենզիան ուժի մեջ է մտնում 2021 թվականի օգոստոսի 17-ից:
3. Լիցենզիան գործում է մինչև 2036 թվականի օգոստոսի 17-ը:

## **3. Գործունեության իրականացման տարածքը**

4. Լիցենզիան ուժի մեջ մտնելու պահից Լիցենզավորված անձին իրավունք է տրվում և պարտավորեցվում է Լիցենզիայով նախատեսված գործունեությունն իրականացնել Սպասարկման տարածքում՝ Ստեփանակերտ քաղաքում:

## **4. Լիցենզավորված անձի կողմից մատուցվող Ծառայությունները և դրանց էությունը կազմող գործառույթները**

5. Լիցենզիան ուժի մեջ մտնելու պահից Լիցենզավորված անձին իրավունք է տրվում և պարտավորեցվում է Ջրային համակարգով մատուցել Ծառայություններ Լիցենզիայի 3-րդ կետով սահմանված ժամկետում և Սպասարկման տարածքում:

6. Լիցենզավորված անձի կողմից Ծառայությունների մատուցումը ներառում է հետևյալ գործառույթները՝

1) Ջրային համակարգի կառավարում, շահագործում, պահպանում, բարելավում, ընդլայնում.

2) Հանձնաժողովի կողմից սահմանված օրինակելի ձևերին համապատասխան Ծառայությունների մատուցման պայմանագրերի կնքում.

3) Ջրային համակարգին Բաժանորդների ներքին ցանցի միացում.

4) մատուցված Ծառայությունների հաշվառման կազմակերպում և ապահովում.

5) մատուցված Ծառայությունների դիմաց գումարների գանձում.

6) մակերևութային ջրերի հեռացման ստորգետնյա համակարգի շահագործում և պահպանում.

7) հակահրդեհային նպատակներով և ցայտադրյուններով ջրի ապահովում:

7. Լիցենզավորված անձն իրավունք ունի իրականացնելու լիցենզավորված գործունեությանն առնչվող այլ գործառույթներ:

## **5. Լիցենզավորված անձի գործունեության պայմանները**

8. Լիցենզավորված անձը պարտավոր է իր գործունեությունն իրականացնել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ջրային օրենսգրքին, Լիցենզիային, Կանոններին, Ծառայությունների մատուցման պայմանագրերի օրինակելի ձևերին, Հանձնաժողովի և այլ իրավական ակտերին համապատասխան:

9. Լիցենզավորված անձն իրավունք չունի Լիցենզիան օտարելու կամ այլ կերպ փոխանցելու մեկ այլ անձի, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի և՝ պայմանով, որ նախապես ստացել է Հանձնաժողովի գրավոր թույլտվությունը:

10. Լիցենզավորված անձն իրավունք չունի Ջրային համակարգը կամ նրա մի մասը հանձնելու ենթավարձակալության, անհատույց կամ հատուցելի օգտագործման, բացառությամբ Լիցենզիայի 11-րդ կետով նախատեսված դեպքի:

11. Լիցենզավորված անձը տեխնիկական հնարավորությունների դեպքում պարտավոր է փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցման կամ շահագործման նպատակով թույլատրել միանալ Ջրային համակարգին կամ պայմանագրի հիման վրա թույլատրել դրա օգտագործումը, եթե այն չի վտանգում Ծառայությունների մատուցմանը, չի հանգեցնում Լիցենզիայի պայմանների կամ Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված նորմատիվ պահանջների խախտմանը: Լիցենզավորված անձի կողմից սահմանված՝ Ջրային համակարգին միացման պահանջները պետք է լինեն հրապարակային, հիմնավոր և ոչ խտրական:

12. Լիցենզավորված անձը պարտավոր է վարել այլ ձեռնարկատիրական (տնտեսական) գործունեության առանձնացված հաշվապահական հաշվառում: Լիցենզավորված անձի կողմից լիցենզավորված գործունեությանը չառնչվող այլ ձեռնարկատիրական (տնտեսական) գործունեության իրականացումը չպետք է

վտանգի Լիցենզիայի պայմանների պատշաճ կատարումը:

13. Լիցենզավորված անձը պարտավոր է մեծածախ ջրամատակարարման, մեծածախ ջրահեռացման ծառայությունների մատուցման պայմանագրերը մինչև կնքումը ներկայացնել Հանձնաժողովի համաձայնեցմանը:

14. Լիցենզավորված անձը Հանձնաժողովի սահմանած կարգով Հանձնաժողով է ներկայացնում ֆինանսական հաշվետվություններ, տեխնիկատնտեսական տեղեկատվություններ, ինչպես նաև հաշվետվություններ և տեղեկատվություններ՝ սպասարկման որակի ցուցանիշների վերաբերյալ:

15. Լիցենզավորված անձի գործունեության հաշվապահական հաշվառումը, հաշվետվությունները և տեղեկատվությունները պետք է համապատասխանեն Արցախի Հանրապետության օրենսդրության և Հանձնաժողովի կողմից սահմանված իրավական ակտերի պահանջներին:

16. Լիցենզավորված անձը պատասխանատվություն է կրում իր գործունեության մասին Հանձնաժողով ներկայացրած հաշվետվությունների և տեղեկատվությունների հավաստիության համար:

17. Լիցենզավորված անձը պարտավոր է Հանձնաժողովի պահանջով և սահմանած ժամկետում սպառիչ տեղեկատվություն ներկայացնել լիցենզավորված գործունեության վերաբերյալ:

18. Լիցենզավորված անձի կողմից Հանձնաժողով ներկայացված տեղեկատվությունը հրապարակային է, եթե այն Լիցենզավորված անձի կողմից չի համարվում գաղտնի և նշված չէ որպես «ընկերությանը վերաբերող գաղտնապահական տեղեկատվություն»: Լիցենզավորված անձն իրավունք ունի ապացուցելու, որ ներկայացված տեղեկատվության (ներառյալ «ընկերությանը վերաբերող գաղտնապահական տեղեկատվության») հրապարակումը կարող է վնասել իր առևտրային գործունեության շահերին: Հանձնաժողովը քննարկում է գաղտնիության վերաբերյալ Լիցենզավորված անձի հիմնավորումները և իրավասու է ընդունելու կամ մերժելու նման տեղեկատվություն չհրապարակելու վերաբերյալ վերջինիս դիմումը:

19. Լիցենզավորված անձը պարտավոր է իրականացնել ֆինանսական հաշվետվությունների աուդիտ և աուդիտորական եզրակացությունն ու հաշվետվությունը ներկայացնել Հանձնաժողով, ինչպես նաև աուդիտորական եզրակացությունն ու դրա հետ կապված հրապարակման ենթակա այլ նյութերը տեղադրել իր պաշտոնական կայքում:

20. Լիցենզավորված անձը պարտավոր է Հանձնաժողով ներկայացնել իր մոտ անցկացված իրավասու մարմինների ստուգումների եզրակացությունները և արձանագրությունները (ակտերը), ինչպես նաև տեխնիկական աուդիտի եզրակացությունը և հաշվետվությունը:

21. Լիցենզավորված անձը պարտավոր է հնարավորինս սեղմ ժամկետում Հանձնաժողով հայտնել այն հանգամանքների մասին, որոնք հանգեցրել են կամ կարող են հանգեցնել Լիցենզիայի պայմանների խախտման:

## **6. Սակագներ**

22. Լիցենզավորված անձի կողմից Ծառայությունների մատուցման սակագները սահմանում է Հանձնաժողովը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ջրային օրենսգրքին և Հանձնաժողովի կողմից ընդունված իրավական ակտերին համապատասխան:

23. Լիցենզիայի 22-րդ կետով նախատեսված սակագներն ուժի մեջ են մտնում օրենսդրությամբ սահմանված կարգով:

## **7. Գործունեության վերահսկում**

24. Լիցենզիայի պայմանների կատարման նկատմամբ վերահսկումն իրականացնում է Հանձնաժողովը:

25. Լիցենզիայի պայմանների կատարման նկատմամբ վերահսկումն

ապահովելու նպատակով Հանձնաժողովի լիազորած ներկայացուցիչներն իրավունք ունեն ազատ մուտք գործելու Լիցենզավորված անձի տարածք: Վերահսկումն իրականացնելու ընթացքում Լիցենզավորված անձը պարտավոր է համագործակցել Հանձնաժողովի հետ և աջակցել վերջինիս (նրա լիազորած ներկայացուցիչներին):

26. Հանձնաժողովի լիազորած ներկայացուցիչները Լիցենզավորված անձի տարածքում պահպանում են Լիցենզավորված անձի ներքին կանոնակարգը և Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված նորմերը:

27. Հանձնաժողովը օրենքով իրեն վերապահված իրավասությունների պատշաճ կատարումն ապահովելու նպատակով իրավասու է իրականացնելու Լիցենզավորված անձի գործունեության մոնիթորինգ (մշտադիտարկում):

## **8. Տուժանքներ**

28. Հանձնաժողովը, Լիցենզավորված անձի կողմից Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ջրային օրենսգրքի դրույթների, Լիցենզիայի պայմանների, Հանձնաժողովի այլ իրավական ակտերի պահանջների կատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում, իր իրավասությունների սահմաններում իրավասու է տալու խախտումները վերացնելու հանձնարարականներ և կիրառելու տուժանքների հետևյալ տեսակները.

- 1) նախազուշացում.
- 2) տուգանք.
- 3) լիցենզիայի գործողության կասեցում.
- 4) լիցենզիայի գործողության դադարեցում:

29. Լիցենզավորված անձի կողմից՝

1) Ջրային օրենսգրքի դրույթները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելն առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնչորսհազարապատիկից մինչև քսանութհազարապատիկի չափով.

2) Լիցենզիայի պայմանները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելն առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի յոթհազարապատիկից մինչև տասնչորսհազարապատիկի չափով.

3) Հանձնաժողովի իրավական ակտերի պահանջները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելն առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհազարապատիկից մինչև յոթհազարապատիկի չափով:

30. Լիցենզիայի 28-րդ կետում նշված տուժանքների կիրառումը Լիցենզավորված անձին չի ազատում հիմնական պարտավորության կատարումից և Բաժանորդի առջև պատասխանատվությունից:

31. Լիցենզավորված անձի նկատմամբ տուժանք չի կիրառվում, եթե նրա գործունեության մեջ արձանագրված խախտումները Ֆորս մաժորի հետևանք են:

## **9. Լիցենզիայում փոփոխությունների կատարումը, Լիցենզիայի վերաձևակերպումը, գործողության ժամկետի երկարաձգումը, կասեցումը և դադարեցումը**

32. Լիցենզիայում փոփոխությունները կատարվում են ինչպես Հանձնաժողովի նախաձեռնությամբ, այնպես էլ Լիցենզավորված անձի առաջարկությամբ:

33. Լիցենզիայում փոփոխություններ կատարելու վերաբերյալ Լիցենզավորված անձի առաջարկությունը ներկայացվում և քննարկվում է Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով:

34. Հանձնաժողովի նախաձեռնությամբ Լիցենզիայում փոփոխություններ կատարվում են Լիցենզավորված անձի համաձայնությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ նախատեսվող փոփոխություններն անհրաժեշտ են Արցախի Հանրապետության օրենքների պատշաճ կատարումն ապահովելու համար:

35. Լիցենզիայի վերաձևակերպումը, գործողության ժամկետի երկարաձգումը, կասեցումը և դադարեցումն իրականացվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ջրային օրենսգրքի, «Լիցենզավորման մասին» օրենքի և Հանձնաժողովի կողմից սահմանված կարգի համաձայն:

## 10. Պատշաճ ծանուցում

36. Լիցենզավորված անձը համարվում է պատշաճ ձևով ծանուցված, եթե տեղեկացումը կամ փաստաթղթերը ուղարկվել են պատվիրված նամակով՝ հանձնման մասին ծանուցմամբ կամ հաղորդագրության ձևակերպումն ապահովող կապի այլ միջոցների օգտագործմամբ, կամ էլեկտրոնային համակարգի միջոցով (այդ թվում՝ հայտատուի նշած էլեկտրոնային փոստի միջոցով), ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված էլեկտրոնային կապի այլ միջոցներով կամ հանձնվել են ստացականով:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

2021 թվականի հուլիսի 20-ի

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴԵՂԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ  
ԵՎ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2018  
ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 238-Ն ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ  
ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**N 172-Ն**

**Հ Ր Ա Մ Ա Ն**

«Դեղերի մասին» օրենքի 1-ին հոդվածի «ժգ» կետին և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 41-րդ հոդվածին համապատասխան՝

**ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝**

1. Հաստատել Արցախի Հանրապետության հիմնական դեղերի ցանկը՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել **Արցախի Հանրապետության առողջապահության նախարարի 2018 թվականի սեպտեմբերի 27-ի «Արցախի Հանրապետության հիմնական դեղերի ցանկը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության նախարարի 2012 թվականի փետրվարի 06-ի N 14-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 238-Ն հրամանը:**

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

**Մ. ՀԱՅՐԻՅԱՆ**

2021 թվականի հուլիսի 20  
ք. Ստեփանակերտ



**ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴԵՂԵՐԻ ՑԱՆԿ**

<b>1. ԱՆԶԳԱՑԱՑՆՈՂՆԵՐ</b>	
<b>1) ընդհանուր անզգայացնողներ, թթվածին</b>	
<b>ա. շնչառման դեղեր</b>	
Ազոտի ենթօքսիդ Nitrous Oxide	զազ շնչառման
Թթվածին Oxygen	զազ շնչառման
Հալոթան Halothane	լուծույթ շնչառման
Իզոֆլուրան Isoflurane	հեղուկ շնչառման
<b>բ. ներարկման դեղեր</b>	
Կետամին Ketamine	լուծույթ ներարկման, 500մգ/10մլ
Պրոպոֆոլ Propofol	լուծույթ ներարկման, 10մգ/մլ, 20մգ/մլ
<b>Այլընտրանքային</b>	
Թիոպենտալ Thiopental	դեղափոշի ներարկման լուծույթի, 500մգ, 1000մգ
Ֆենտանիլ Fentanyl	լուծույթ ներարկման, 0.05մգ/մլ
<b>2) տեղային անզգայացնողներ</b>	
Բուպիվակային Bupivacaine	լուծույթ ներարկման, 0.25%, 0.5% լուծույթ ներարկման (ոդոնոլոգիային անզգայացման), 0.5%
Լիդոկային Lidocaine	լուծույթ ներարկման, 10մգ/մլ, 20մգ/մլ, 100մգ/մլ, լուծույթ ներարկման (ոդոնոլոգիային անզգայացման), 5% դեղաձևեր տեղային կիրառման, 2%, 4%, 5%, 10%
Լիդոկային + Էպինեֆրին (Ադրենալին) Lidocaine + Epinephrine (Adrenaline)	լուծույթ ներարկման, 1%, 2% + Էպինեֆրին 1:200 000 ատամնաբուժական փամփուշտ 2% + Էպինեֆրին 1:80 000
<b>Այլընտրանքային</b>	
Էֆեդրին Ephedrine	լուծույթ ներարկման, 30մգ/մլ (ծննդաբերության ընթացքում ոդոնոլոգիային անզգայացման համար՝ թերձնշումը կանխարգելելու նպատակով)
<b>3) նախադեղատոգորման (պրեմեդիկացիայի) և կարճատև միջամտությունների ընթացքում անդորրաբեր (սեդատիվ) դեղեր</b>	
Ատրոպին Atropine	լուծույթ ներարկման, 1մգ/մլ
Միդազոլամ Midazolam	լուծույթ ներարկման, 1մգ/մլ, 5մգ/մլ, հեղուկ ներքին ընդունման 2մգ/մլ դեղահատեր 7.5մգ, 15մգ
Մորֆին Morphine	լուծույթ ներարկման, 10մգ/մլ
Դիազեպամ Diazepam	լուծույթ ներարկման, 5մգ/մլ, դեղահատ, 5մգ, 10մգ

<b>2. ՑԱՎԱԶԵՐԾՈՂ ԵՎ ԱՍՈՔԻԶ (ՊԱԼԻԱՏԻՎ) ԲՈՒԺՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ</b>	
<b>1) ոչ ափիոնային և ոչ ստերոիդային հակաբորբոքային դեղեր</b>	
Ացետիլսալիցիլաթթու Acetylsalicylic acid	դեղահատ, 100մգ - 500մգ մոմիկներ ուղիղաղիքային, 50մգ - 150մգ
Դիկլոֆենակ Diclofenac	դեղահատ, դեղապատիճ, 25մգ – 100մգ, լուծույթ ներարկման, 25մգ/մլ, դոնդոդ, 1%, 5%, մոմիկներ ուղիղաղիքային 12,5մգ, 25մգ
Իբուպրոֆեն Ibuprofen	դեղահատ, 200մգ, 400մգ, 600մգ, լուծույթ ներքին ընդունման, 20մգ/մլ, 40մգ/մլ, 200մգ/5մլ՝ 3 ամսականից ոչ փոքր երեխաների համար
Պարացետամոլ Paracetamol	դեղահատ, 100մգ – 500մգ, մոմիկներ ուղիղաղիքային, 50մգ, 100մգ, 150մգ, 250մգ լուծույթ ներքին ընդունման, 120մգ/5մլ, 125մգ/5մլ լուծույթ կաթիլաներարկման 10մգ/մլ
<b>Այլընտրանքային</b>	
Կետոպրոֆեն Ketoprofen	դեղահատ, դեղապատիճ 50մգ, 200մգ, լուծույթ ներարկման 25մգ/մլ, 50մգ/մլ
Մետամիզոլ Metamizole	լուծույթ ներարկման 500մգ/մլ
<b>2) ափիոնային ցավազերծիչներ</b>	
Մորֆին Morphine	լուծույթ ներարկման, 10մգ/մլ գրանուլներ (դանդաղ ձերբագատման, ջրով խառնելու), 20մգ – 200մգ հեղուկ ներքին ընդունման, 2մգ/մլ, 10մգ/5մլ, 20մգ/մլ դեղահատ (դանդաղ ձերբագատման), 10մգ-200մգ դեղահատ 5մգ, 10մգ
Տրիմեպերիդին Trimeperidine	լուծույթ ներարկման, 2%
Կոդեին Codeine	դեղահատ, 30մգ
Տրամադոլ Tramadol	դեղահատ, դեղապատիճ, 50մգ լուծույթ ներարկման, 50մգ/մլ, 100մգ/2մլ
Ֆենտանիլ Fentanyl	սպեղանի տրանսդերմալ, 12մկգ/ժ, 25մկգ/ժ, 50մկգ/ժ, 75մկգ/ժ, 100մկգ/ժ
Մեթադոն Methadone	դեղահատ, 5մգ, 10մգ դեղահատեր ներքին ընդունման դեղակախույթի, 40մգ խտանյութ ներքին ընդունման լուծույթի, 5մգ/մլ, 10մգ/մլ, 25մգ/մլ լուծույթ ներքին ընդունման 5մգ/5մլ, 10մգ/5մլ, 10մգ/մլ
<b>3) այլ ընդհանուր ախտանիշների համար դեղեր՝ ամոքիչ բուժօգնության ընթացքում</b>	
Ամիտրիպտիլին Amitriptyline	դեղահատ, 10մգ, 25մգ, 75մգ
Ցիկլիզին Cyclizine	լուծույթ ներարկման, 50մգ/մլ դեղահատ, 50մգ
Դեքսամեթազոն Dexamethasone	լուծույթ ներարկման, 4մգ/մլ, 5մգ/մլ, դեղահատ, 0.5մգ, 2մգ, 4մգ լուծույթ ներքին ընդունման, 2մգ/5մլ
Դիազեպամ Diazepam	լուծույթ ներարկման, 5մգ/մլ, դեղահատ, 5մգ, 10մգ լուծույթ ներքին ընդունման, 2մգ/5մլ հեղուկ ուղիղաղիքային, 2.5մգ, 5մգ, 10մգ
Դոկուսեյտ նատրիում Docusate sodium	դեղապատիճ, 100մգ, լուծույթ ներքին ընդունման, 50մգ/5մլ
Ֆլուօքետին Fluoxetine	դեղապատիճ, 20մգ
Հալոպերիդոլ Haloperidol	լուծույթ ներարկման, 5մգ/մլ, դեղահատ, 0.5մգ, 1.5մգ, 2մգ, 5մգ լուծույթ ներքին ընդունման, 2մգ/մլ

Հիոսցին Hyoscine	լուծույթ ներարկման, 10մգ/մլ, 20մգ/մլ դեղահատ, 10մգ
Լակտուլոզ Lactulose	լուծույթ ներքին ընդունման, 660մգ/մլ, 667մգ/մլ, 670մգ/մլ, 3.1-3.7գ/5մլ
Լոպերամիդ Loperamide	դեղահատ, դեղապատիճ, 2մգ
Մետոկլոպրամիդ Metoclopramide	լուծույթ ներարկման, 5մգ/մլ դեղահատ, 10մգ լուծույթ ներքին ընդունման, 5մգ/5մլ
Միդազոլամ Midazolam	լուծույթ ներարկման, 1մգ/մլ, 5մգ/մլ, հեղուկ ներքին ընդունման, 2մգ/մլ դեղահատեր, 7.5մգ, 15մգ
Օնդանսետրոն Ondansetron	լուծույթ ներարկման, 2մգ/մլ, լուծույթ ներքին ընդունման, 4մգ/5մլ, դեղահատ, դեղապատիճ, 4մգ, 8մգ
Սենոզիդներ A, B Sennosides A, B	դեղահատ, 70մգ
Տամսուլոզին Tamsulosin	դեղահատ, դեղապատիճ, 0.4մգ
Տոլպերիզոն Tolperisone	դեղահատ, 50մգ, 150մգ
Պիրացետամ Piracetam	լուծույթ ներարկման, 200մգ/մլ դեղահատ, 400մգ, 800մգ, 1200մգ
Խոլին ալֆոսցերատ Choline alfoscerate	դեղապատիճ, 400մգ, լուծույթ ներարկման 250մգ/մլ
Վինպոցետին Vinpocetine	դեղահատ, 5մգ; 10մգ
Ցիտիկոլին Citicoline	լուծույթ ն/ե և մ/մ ներարկման, 500մգ/4մլ
Բետահիստին Betahistine	դեղահատ, 8մգ; 16մգ; 24մգ
Դիոսմին + Հեսպերիդին Diosmin + Hesperidin	դեղահատ թաղանթապատ ,450մգ + 50մգ; 900մգ+100մգ
Դիոսմին Diosmin	դեղահատ թաղանթապատ, 600մգ
Տրօքսերուտին Troxeutin	դեղապատիճ 300մգ; դոնդող արտաքին կիրառման 20մգ/գ
<b>3. ԱԼԵՐԳԻԱՅԻ, ԱՆԱՏԻԼԱՔՍԻԱՅԻ ԺԱՄԱՆԱԿ ԿԻՐԱՌՎՈՂ ԴԵՂԵՐ</b>	
Դեքսամեթազոն Dexamethasone	լուծույթ ներարկման, 4մգ/մլ, 5մգ/մլ
Դիֆենհիդրամին Diphenhydramine	դեղահատ, 50մգ, 100մգ լուծույթ ներարկման, 10մգ/մլ
Էպինեֆրին (Ադրենալին) Epinephrine (Adrenaline)	լուծույթ ներարկման, 1.82մգ/մլ, 1մգ/մլ
Լորատադին Loratadine	դեղահատ, 10մգ, լուծույթ ներքին ընդունման, 1մգ/մլ
Ցետիրիզին Cetirizine	դեղահատ, 5 մգ, 10մգ; լուծույթ ներքին ընդունման, 5մգ/մլ, 10մգ/մլ
Պրեդնիզոլոն Prednisolone	դեղահատ, 5մգ, 25մգ լուծույթ ներարկման, 30մգ/մլ, լուծույթ ներքին ընդունման, 5մգ/մլ
Հիդրոկորտիզոն Hydrocortisone	դեղափոշի ներարկման լուծույթի, 100մգ
Նորէպինեֆրին (Նորադրենալին) Norepinephrine (Norepinephrine)	լուծույթ ներարկման, 1մգ/մլ,

Լևոցետիրիբին Levocetirizine	դեղահատ թաղանթապատ, 5մգ; կաթիլներ ներքին ընդունման, 5մգ/մլ
Դիմետինդեն Dimetindene	դոնդող, 1մգ/գ; կաթիլներ ներքին ընդունման, 1մգ/մլ
Քլորոպիրամին Chloropyramine	դեղահատ, 25մգ; լուծույթ ներարկման, 20մգ/մլ
Դեսլորատադին Desloratadine	դեղահատ թաղանթապատ, 5մգ; օշարակ, լուծույթ ներքին ընդունման 0,5մգ/մլ
<b>4. ՀԱԿԱԹՈՒՑՆԵՐ ԵՎ ԹՈՒՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ԿԻՐԱՌՎՈՂ ԴԵՂԵՐ</b>	
<b>1) ոչ հասկորոշիչ</b>	
Ակտիվացված ածուխ Charcoal Activated	դեղահատ, 250մգ
<b>2) հասկորոշիչ</b>	
Ատրոպին Atropine	լուծույթ ներարկման, 1մգ/մլ
Ացետիլցիստեին Acetylcysteine	լուծույթ ներարկման, 100մգ/մլ, 200մգ/մլ լուծույթ ներքին ընդունման, 10%, 20% դեղահատեր դյուրալույծ, 100մգ, 200մգ, 600մգ
Կալցիումի գլյուկոնատ Calcium gluconate	լուծույթ ներարկման, 100մգ/մլ
Մեթիլթիոնինի քլորիդ Methylthioninium Chloride	լուծույթ ներարկման, 10մգ/մլ
Նալօքսոն Naloxone	լուծույթ ներարկման, 400մգ
Նատրիումի նիտրիտ Sodium nitrite	լուծույթ ներարկման, 30մգ/մլ
Պենիցիլամին Penicillamine	դեղապատիճ, դեղահատ, 250մգ
Նատրիումի թիոսուլֆատ Sodium Thiosulfate	լուծույթ ներարկման, 250մգ/մլ, 300մգ/մլ
<b>5. ՀԱԿԱՑՆՑՈՒՄԱՅԻՆ, ՀԱԿԱԷՊԻԼԵՊՍԱՅԻՆ ԴԵՂԵՐ</b>	
Դիազեպամ Diazepam	լուծույթ ներարկման, 5մգ/մլ, դոնդող կամ ուղիղաղիքային լուծույթ, 5մգ/մլ
Կարբամազեպին Carbamazepine	դեղահատ, 100մգ - 400մգ դեղահատեր ծամելու, 100մգ - 200մգ լուծույթ ներքին ընդունման, 100մգ/5մլ
Լամոտրիջին Lamotrigine	դեղահատ, 25մգ, 50մգ, 100մգ, 200մգ դեղահատեր ծամելու 2մգ, 5մգ, 25մգ, 50մգ, 100մգ, 200մգ
Լևետիրացետամ Levetiracetam	դեղահատ, 250մգ, 500մգ, 750մգ, 1000մ
Լորազեպամ Lorazepam	լուծույթ ներարկման, 2մգ/մլ, 4մգ/մլ
Մագնեզիումի սուլֆատ Magnesium sulfate	լուծույթ ներարկման, 0.5գ/մլ, էկլամպսիայի և ծանր նախակլամպսիայի դեպքում կիրառման համար, ոչ այլ ցնցումների դեպքում
Միդազոլամ Midazolam	լուծույթ ներարկման, 1մգ/մլ, 5մգ/մլ
Վալպրոատթթու Valproic acid	դեղահատ, 200մգ, 300մգ, 500մգ, դեղահատ դյուրալույծ, 100մգ լուծույթ ներքին ընդունման, 50մգ/մլ, 200մգ/5մլ, 300մգ/մլ, օշարակ 57,64մգ/մլ, 50մգ/մլ
Ֆենիտոյին Phenytoin	լուծույթ ներարկման, 50մգ/մլ լուծույթ ներքին ընդունման, 25մգ-30մգ/5մլ դեղապատիճ, դեղահատ, 25մգ, 50մգ, 100մգ, 117մգ դեղահատեր ծամելու, 50մգ

Ֆենոբարբիտալ Phenobarbital	լուծույթ ներարկման, 200մգ/մլ դեղահատ, 15մգ-100մգ լուծույթ ներքին ընդունման, 15մգ/5մլ
Կլոնազեպամ clonazepam	դեղահատեր, 2մգ
Գլիցին Glycine	դեղահատեր ենթալեզվային 100մգ, լուծույթ ողողման 15մգ/մլ
Տոպիրամատ Topiramate	դեղահատեր թաղանթապատ 25մգ, 50մգ, 100մգ
Լևետիրացետամ Levetiracetam	դեղահատեր թաղանթապատ 250մգ, 500մգ
Գաբապենտին Gabapentin	դեղապատիճներ 300մգ
<b>Այլընտրանքային</b>	
Էթոսուքսիմիդ Ethosuximide	դեղապատիճ, 250մգ լուծույթ ներքին ընդունման, 250մգ/5մլ
Վալպրոյաթթու Valproic acid	լուծույթ ներարկման, 100մգ/մլ
<b>6. ՀԱԿԱՎԱՐԱԿԱՑԻՆ ԴԵՂԵՐ</b>	
<b>1) որդամուղ դեղեր</b>	
<b>ա. աղիքային որդամուղներ</b>	
Ալբենդազոլ Albendazole	դեղահատ, 200մգ - 600մգ լուծույթ ներքին ընդունման, 20մգ/մլ, 40մգ/մլ դեղահատեր ծամելու, 400մգ
Լևամիզոլ Levamisole	դեղահատ, 50մգ, 150մգ
Մեբենդազոլ Mebendazole	դեղահատ, 100մգ, 500մգ
Պիրանտել Pyrantel	դեղահատ, 125մգ, 250մգ, լուծույթ ներքին ընդունման, 125մգ/2.5մլ, 50մգ/մլ
Պրազիքվանտել Praziquantel	դեղահատ, 150մգ, 600մգ
Նիկլոսամիդ Niclosamide	դեղահատ, 500մգ
Իվերմեկտին Ivermectin	դեղահատ, 3մգ
<b>2) հակամանրէային դեղեր</b>	
<b>ա. բետա-լակտամային դեղեր</b>	
Ամպիցիլին Ampicillin	դեղափոշի ներարկման լուծույթի, 500մգ, 1գ
Ամօքսիցիլին Amoxicillin	դեղապատիճ, 250մգ, 500մգ, դեղափոշի ներքին ընդունման լուծույթի, 125մգ/5մլ, 250մգ/5մլ դեղափոշի ներարկման լուծույթի, 250մգ, 500մգ, 1գ
Ամօքսիցիլին + ֆլավուլանաթթու Amoxicillin + Clavulanic acid	դեղահատ, 500մգ + 125մգ դեղափոշի ներքին ընդունման լուծույթի, 125մգ + 31.25մգ/5մլ, 250մգ + 62.5մգ/5մլ դեղափոշի ներարկման լուծույթի, 500մգ + 100 մգ, 1000մգ + 200մգ
Բենզաթին Բենզիլպենիցիլին Benzathine Benzylpenicillin	դեղափոշի ներարկման լուծույթի, 1.2 մլն ՄՄ, 2.4 մլն ՄՄ Բենզիլպենիցիլին
Բենզիլպենիցիլին Benzylpenicillin	դեղափոշի ներարկման լուծույթի, 1000000ՄՄ, 5000000ՄՄ
Ցեֆալեքսին Cefalexin	դեղապատիճ, 250մգ, 500մգ, դեղափոշի ներքին ընդունման լուծույթի, 125մգ/5մլ, 250մգ/5մլ
Ցեֆազոլին	դեղափոշի ներարկման լուծույթի, 0.5գ, 1գ` > 1

Cefazolin	ամսականից
Ցեֆիքսիմ Cefixime	դեղահատ, դեղապատիճ 100մգ, 200մգ, 400մգ դեղափոշի ներքին ընդունման լուծույթի, 20մգ/մլ, 100մգ/5մլ
Ցեֆտրիաքսոն Ceftriaxone	դեղափոշի ներարկման լուծույթի, 250մգ, 500մգ, 1գ
Կլօքսացիլին Cloxacillin	դեղապատիճ, 500մգ, 1մգ, դեղափոշի ներարկման լուծույթի, 500մգ, դեղափոշի ներքին ընդունման լուծույթի, 125մգ/5մլ
Պրոկային Բենզիլպենիցիլին Procaine Benzylpenicillin	դեղափոշի ներարկման լուծույթի, 1գ, 3գ
Ֆենօքսիմեթիլպենիցիլին Phenoxymethylpenicillin	դեղահատ, 250մգ, դեղափոշի ներքին ընդունման լուծույթի, 250մգ/5մլ
Պիպերացիլին + Տազոբակտամ Piperacillin + Tazobactam	դեղափոշի ներարկման լուծույթի, 2000մգ + 250մգ, 4000մգ + 500մգ
<b>Այլընտրանքային</b>	
Իմիպենեմ + Ցիլաստատին Imipenem + Cilastatin	դեղափոշի ներարկման լուծույթի, 500գ + 500մգ
Ցեֆոտաքսիմ Cefotaxime	դեղափոշի ներարկման լուծույթի, 250մգ, 500մգ, 1000մգ
Ցեֆտազիդիմ Ceftazidime	դեղափոշի ներարկման լուծույթի, 250մգ, 500մգ, 1գ
Մերոպենեմ Meropenem	դեղափոշի ներարկման լուծույթի, 500մգ, 1000մգ
<b>բ. այլ հակամանրէային դեղեր</b>	
